



Դպրոցական կլիմայի վերաբերյալ իրավունքների օրինագիծ

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը (ԼԱՄԴՇ) պարտավորվում է ապահովել անվտանգ և առողջ դպրոցական միջավայր, ինչը կաջակցի բոլոր աշակերտների բարեկեցությանը ամեն առումով: ԼԱՄԴՇ-ի աշակերտները, անձնակազմը և ծնողները/խնամակալները արժևորում են արդար և հետևողական ուղեցույցներ ուղղված կարգապահության կուլտուրայի ներդրմանը և զարգացմանը, որոնք հիմնված են դրական վարքագծի հետ կապված միջոցների վրա և գերծ են պատժիչ մեթոդներից, որոնք խանգարում են ուսուսանողական պրոցեսին:

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը պարտավորվում է ապահովել աշակերտներին որակյալ կրթությամբ, որը կապահովի հնարավորություն ընտրելու ուղիներ դեպի քոլեջ կամ աշխատանք, որոնք կօգնեն նրանց դառնալ հասարակության օգտակար անդամներ: Բոլոր Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի աշակերտները կայցելեն դպրոցներ, որտեղ ուշադրություն է դարձվելու մթնոլորտի անվտանգությանը, դասավանդմանը և ուսուսանողությանը, միջանձնային հարաբերություններին և ինստիտուցիոնալ միջավայրին, որը ազդեցություն կունենա աշակերտի ուսուցման և բարեկեցության վրա: Այս դրական դպրոցական մթնոլորտը առաջարկելու է.



- **Համադպրոցական դրական վարքագծին ուղղված միջոցներ և աջակցություն (SWPBIS)**
Միջոցներ, որոնք նվազեցնում են դասերին մասնակցելու արգելքները, բարելավում են հաճախելիությունը, բարձրացնում են քննությունների արդյունքները, և որոնք իրականացմանը աջակցում են ամբողջ դպրոցական անձնակազմը:
- **Դասերին մասնակցելու արգելքների այլընտրանքներ և դրական վարքագծին ուղղված միջոցներ և աջակցություն**
Դասերին մասնակցելու արգելքների այլընտրանքների քաղաքականությունը օգտագործվելու է բոլոր աշակերտների համար հետևողականորեն ու տարիքին համապատասխան ձևով նախքան որևէ արգելքների, որոշ իրավախախտումների դեպքերի բացառությամբ, երբ արգելքը պահանջվում է Կալիֆորնիայի կրթության օրենսգրքով, § 48915 (c): 2013 թ. դրությամբ, ոչ մի աշակերտ դասերին մասնակցելու արգելք չի ստացել կամ վտարվել «դիտավորյալ իրավախախտում» (48900 (k) համար:
- **Դիտարկման համար հասանելի տվյալներ դպրոցական կարգապահության, դպրոցական կալանքի և կանչերի (դատարան) վերաբերյալ**
Յուրաքանչյուր աշակերտ և ծնող/խնամակալ իրավունք ունի ստանալու շրջանի կայքում ամսական դպրոցական տվյալներ կարգապահության մասին, այդ թվում՝ դասերին մասնակցելու արգելքների, ոչ կամավոր տեղափոխման, հնարավոր տեղափոխման, վտարման, դպրոցական կալանքի և կանչերի (դատարան) մասին: Նման տվյալները տրամադրվելու են այնպիսի եղանակով, որ պահպանվի գաղտնիություն յուրաքանչյուր աշակերտի դեպքում:
- **Վերականգնողական արդարադատության (RI) մոտեցումներ, որոնք լուծում են աշակերտների ներանձնային կոնֆլիկտներ**
Սկսած 2015-2016 ուսուսանողական տարվանից դպրոցները

կներդնեն և կսկսեն իրականացնել, անհրաժեշտության դեպքում, RJ մոտեցումները որպես այլընտրանք ավանդական դպրոցական կարգապահությանը և որպես միջոցներ, որոնք համապատասխանում են Համադպրոցական դրական վարքագծին ուղղված միջոցների և աջակցության քաղաքականությանը:

- **SWPBIS-ի շրջանային նպատակային խումբ**
SWPBIS-ի շրջանային նպատակային խումբը պետք է ներառի ուսուցիչ, աշակերտ, ադմինիստրատոր և ծնողի ներկայացուցիչներ յուրաքանչյուր Ուսուսանողական կենտրոնից, ինչպես նաև անդամներ համայնքային կազմակերպություններից առաջարկություններ ներկայացնելու համար SWPBIS-ի լիակատար իրականացման նպատակով:
- **Դպրոցի տարածքային ոստիկանների դերի և պարտականությունների վերաբերյալ դրույթներ**
Աշակերտները իրավունք ունեն գտնվել անվտանգ և առողջ դպրոցական միջավայրում, որտեղ հնարավորինս նվազագույնի է հասցված իրավապահ մարմինների, վերահսկողության և անչափահաս և քրեական արդարադատության համակարգի ներգրավվածությունը, եթե դա հնարավոր է իրավաբանական տեսակետից:
- **Պաշտոնական բողոքի ներկայացման համակարգի օգտագործում**
Համադպրոցական դրական վարքագծին ուղղված միջոցներ և աջակցություն չկիրառելու դեպքում Աշակերտները և ծնողները/խնամակալները իրավունք ունեն ներկայացնելու պաշտոնական բողոք, եթե SWPBIS-ը չի իրականացվում 60 օրվա ընթացքում պահանջ ներկայացնելուց հետո: